


ՄԱՀՍԱԿԱՅ ԿՈԹՈՂ-ՀՈՒՇԱՐԶԱՆ. ԾԻՇԵՌՆԱԿԱԲԵՐՂ

Մայր Խայրենիքում



ԱՅՍՕՐ, ԱՊՐԻԼԻ 24-ԻՆ, ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ ԵՎ ԵՐԵՎԱՆՈՒՄ

Ապրիլյան եղեռնի 60-ամյակն է:

1915 թվականի ապրիլին հայ ժողովուրդն իր պատմական, հայրենի հողի վրա, Արևմտյան Հայաստանում, ապրեց տառապանքներով և փորձաթյուններով լի իր բազմադարյան պատմության ծայրագույն և արյունոտ ողբերգությունը: Դա այն օրն էր, երբ օրը ցերեկով

«Հինավուրց մի տոհմիկ ազգ
Չմեռավ, այլ մահացավ»,

երիտասարդ թուրքերի՝ իթթիհատական կառավարության ոճրածին ծրագրի գործադրումով, քաղաքակիրթ Եվրոպայի բար անտարբերության մեջ, նրա աչքերի առաջ, գերմանական կայզերապաշտության գիտությանը և բաջալերանքով:

Դա Ի դարի սկզբին պետականորեն կազմակերպված առաջին ցեղասպանությունն էր, որի զոհ գնաց շուրջ երկու միլիոն հայություն, անապատի վերածվեց Արևմտյան Հայաստանը, և հայ ժողովրդի արյունը առատորեն թափվեց այն հողերի վրա, ուր նա հազարամյակներ շարունակ աշխատել, շենացրել և ստեղծագործել էր:

Բայց ձախողվեց ոճրագործների արյունոտ ծրագիրը, և չիրականացավ նրանց հայաջինջ քաղաքականությունը.

«Սակայն, չարի խոփը դիպավ ժեռ քարին,
Եվ ժանգոտած խոփը նրա չդիմացավ...»:

Հայ ժողովրդի մնացորդացը ապրեց: Նա իր մեջ կենսունակության անսպառ ուժեր գտավ և «հոգեվարքի իր մահճում» կարողացավ իր նահատակությունը վերածել ազգային վերածննդյան և «մի նոր կյանքի հույսով զինվեց», ոտքի կանգնեց ռուս բարի և ազնիվ ժողովրդի եղբայրական օգնությամբ, ունեցավ իր հայրենիքը, իր պետականությունը, իր դրոշը:

1975 թվականի ապրիլի 24, Երևան...

Դարձյալ ապրիլ, բայց մի նոր ու խոստումնալից ապրիլ, ազգային փրկությունից և վերագարթունքի ապրիլ, հարության և ճշմարիտ գարնան ապրիլ, ստեղծագործ, աշխարհաշեն սխրանքների ապրիլ, խաղաղության, ազգերի եղբայրության ու համերաշխության ապրիլ, «ապրելու ապրիլ»...

Այսօր, ապրիլի 24-ին, Երևան...

Ծիծեռնակաբերդի բարձունքում՝ վշտի և բերկրանքի կոթող-հուշարձան...

Հայ ժողովուրդը չի մոռացել երբեք իր նահատակներին.

«Ա՛խ, ինչպե՛ս, ո՛րևից մոռանալ

Արհավիրքն այն օրերի.

Աշխարհում ով մոռանա,

Զուխտ աչքով թող քոռանա»:

Այո՛, մեզ հետ են այսօր մեր նահատակները: Մեր այսօրվա հայրենական, հաղթական երթի մեջ կա նաև Ապրիլյան եղեռնի մեր նահատակների ոգին, նրանց հերոսականությունը, հայրենասիրական սխրանքը, մարմնավորված նրանց երազանքը և հայոց պատմության շունչը...

1915 թվականի ապրիլի 24...

Հայ ժողովուրդը, որ ի հայրենիս և ի սփյուռս աշխարհի, համազգային կազմակերպվածությամբ, պետականորեն նշում է իր ազգային, հավաքական նահատակության 60-ամյակը:

Համազգային ուխտագնացության, աղոթքի, ոգեկոչման օր է այսօր ողջ հայության համար:

1975 թվականի ապրիլի 24, հինգշաբթի, Երևան...

Պայծառ, խաղաղ, լույսով ու գարնանային բուրմունքով օծուն, մաքուր, մեծաշունչ ու հայատրոսի առավոտ...

Ծիծեռնակաբերդում, Երևանի կանաչազարդ բարձունքում, վեր է խոյանում 1915 թվականի նահատակների բազալտե կոթող-հուշարձանը... «Հավերժական կրակին խոնարհած սուգի ծանր սալաքարերն են ու կողքին՝ մեծ վշտից, հոգու օրհասական լարումից, դիմադրելու անխափանելի ուժից այսպես անզսպորեն դուրս պոռթկացող երկշեղք հուշապյունը, որը խորհրդանշում է մեր ժողովրդի կենսահաստատ էությունը, ապրելու կերպը...»:

Վաղ առավոտից մայրաքաղաքից, հայրենի հեռավոր շրջաններից, քաղաքներից, գյուղերից և շեներից բազմություններ, ծեր թե պարման, կանաչք թե մանուկներ, մտավորականներ թե բանվորներ, աշակերտություն թե ուսանողություն, բոլո՛րը, բոլո՛րը, հանրապետության ողջ ազգաբնակչությունը ծաղկեպսակներով ու ծաղիկներով, ուխտավորների երկյուղած բարեպաշտությամբ, տրտմաշուք, հանդիսավոր, բայց և հուպարտ ու գիտակից, բարձրանում է դեպի Ծիծեռնակաբերդ...

Մարդկային բազմությունների խաղա՛ղ, այիքվող ծով...

Այո՛, սերունդը, որ մերն է այսօր, և սերունդը, որ կգա, կսիրքն ունի խորապես և ամբողջությամբ ճանաչելու և գնահատելու իր երեկը, իր պատմությունը:

Հայ նոր սերնդի վերաբերմունքը հնի հանդեպ, մեր նախնիների, մեր նահատակների հոգևոր, հայրենասիրական անկրկնելի ժառանգության հանդեպ այսօր, մեր օրերին, մեր ժողովրդի բարոյական առողջության և առաքինության ամենաճշգրիտ ցուցանիշներից մեկն է:

Այսպիսով է, որ ստրպակում է նաև ժամանակների, անցյալի, ներկայի և ապագայի, հին ու նոր սերունդների անբակտեղի ոգեկան կապը...

Այսօր, ապրիլի 24-ին, Երևան...

Ժամը 10-ն է...

Հայրենի բարեխնամ կառավարության ղեկավարները ժամանում են Ծիծեռնակաբերդ՝ հարգելու հիշատակը Ապրիլյան եղեռնի զոհերի, և ծաղկեպսակ դնում հուշարձանին:



«Բնավե՛ր, տնավե՛ր հալք են դարձել»: (Գործ՝ Արարիչ Ստեփան Ա. Միճապանի, 1972 թ.)

«Քարե կապտավուն պատերը շրջան կազմել ու ծանրորեն խոնարհվել են խորքում բոցկլտացող անջեշ կրակի վրա»:

«Ընդ եղեգան փող բոց ելաներ...»:

Հայ ժողովուրդը դարերի դիմաց վառել է իր գոյության, իր հավերժության անջեշ կրակը:

Ծարունակվում է համաժողովրդական ուխտագնացությունը, ծաղկեպսակներով, ծաղիկներով, դեպի Ծիծեռնակաբերդ՝ հայաշո՛ւնշ, հայատրո՛փ: Ժամը 11-ն է:

Ծիծեռնակաբերդ են ժամանում Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը, ՀՍՄՀ Միհասարների սովետին առնթո՛ւր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Սարգիս Գասպարյանը և տեղակալ Սուրեն Հովհաննիսյանը:

Հայոց Հայրապետին դեպի Ծիծեռնակաբերդ ընկերակցում են տ. Կոմիտաս, տ. Արսեն սրբազանները, Գերագույն հոգևոր խորհրդի անդամներ դոկտ. Սարգիս Մելիքսեթյանը, դոցենտ Հովհաննես Թոփուզյանը, նաև Արթուր Հատիսյանն ու Պարզև Ծախբազյանը, տ. Թորգոմ և տ. Մոմիկ աբեղաները:

Մայր Աթոռի երկու սարկավազներ Հայոց Հայրապետի առջևից տանում են շքեղ մի ծաղկեպսակ՝ «Փա՛ռք և լու՛յս մեր նահատակներին» մակագրությամբ, ծաղկեպսակ, որը Նորին Սրբությունը գետեղում է հուշարձանին:

Այնուհետև հայ եկեղեցու և Մայր Աթոռի ներկայացուցիչները, Հայոց Հայրապետի գլխավորությամբ, իջնում և բոլորվում են նահատակաց հիշատակին վառվող կրակի շուրջ, կրակ, որը խորհրդանշում է «մեր անցյալ ցավի, մեր ողբերգական հուշերի անջեշ կրակը» և ուր տեղի է ունենում հոգեհանգստյան մասնավոր արարողություն. «Գթա՛, Տէր, ի հոգիս մեր ննջեցելոց», «Ի վերինն Երուսաղէմ»: Հայոց Հայրապետը հուզմունքից դողացող շրթունքներով «Հոգաց» է արտասանում մեր նահատակների անմահ հիշատակին, նահատակներ, «որք ընկան յընթացս համաշխարհային առաջին պատերազմի, վասն Յիսուսի և վասն հայրենեաց»:


Հոգեհանգստյան շարականների քաղցր ու հոգեհույզ մեղեդին, Հայոց Հայրապետի սուրբ աղոթքը և Ծիծեռնակաբերդից ուսուցիչի կոմիտասյան երաժշտության հնչյունները տարածվում-սփռվում են ողջ Արարատյան դաշտով մեկ՝ որպես օրհնություն, խաղաղություն, պատգամ և նահատակների կտակ, «դառնում բնաբան ուրիշ մի վիպերգության, դառնում գարնան հաղթանակի, արարման և ստեղծումի խորհրդանիշ»:

Այսօր, ապրիլի 24-ին, Էջմիածին, Մայր տաճար...

Ժամը 12-ն է...

Նահատակաց ս. սեղանի վրա պատարագ է մատուցում տ. Վազգեն վրդ. Թաղոյանը և քարոզում «Որդի մարդոյ, մարգարեաց ի վերայ ոսկերացոյ այրոցիկ և ասացես զդոսա... ահաասիկ ես ածից ի վերայ ձեր շունչ կենդանի... և տաց զոգի իմ ի ձեզ և լինիջիք կենդանի» (Եզեկ. ԼԷ 5—6) բնաբանով՝ եզեկիելյան Հարության տեսիլքը կապելով եղեռնի և մեր ազգային, նոր վերածննդյան հետ:

Այնուհետև Հայոց Հայրապետը, ի գլուխ եկեղեցական թափոռի և ողբկցությամբ բազմահազար հավատացյալների, առաջնորդվում է Մայր տաճարի հյուսիսային շրջափակում գտնվող «Ուխտի և Աղոթքի նահատակաց հուշարձան» և նախագահում հոգեհանգստյան արարողությանը, որին ներկա են լինում Մայր Աթոռի ողջ միաբանությունը, Գերագույն հոգևոր խորհրդի անդամ-




ԱՂՈՒՔ ԻՆՏԵՆՏԱԿԱՆԵՐՈՒՄ

ները, հոգևոր Գեմարանի ուսանողությունն ու դասախոսական կազմը, մայրավանքի ողջ աշխատավորությունը:

Մայր Աթոռի միաբաններն ու հոգևոր Գեմարանի ուսանողները խոնարհվում են հուշարձանի առաջ և մեխակներ դնում:

Ժամը 15-ին Մայր Աթոռի միաբանությունը, հոգևոր Գեմարանի դասախոսական կազմն ու ուսանողությունը, ծաղկեպսակով ու ծաղիկներով, բազմության հետ միասին բարձրանում են Ծիծեռնակաբերդ և հպարտ լուությամբ խոնարհում իրենց գլուխները նահատակաց հիշատակին:



Սովետական Հայաստանի 50-ամյակին նվիրված հուշարձանը. Երևան

Այսօր, ապրիլի 24-ին, Երևան...

Ժամը 18.30-ն է...

Հանրապետության հեռուստատեսությամբ Ապրիլյան եղեռնի 60-ամյակի առթիվ, հանուն Հայաստանի կառավարության, հայրենաշունչ ու բովանդակալից ելույթ է ունենում ՀԿԿ Կենտկոմի առաջին քարտուղար Կարեն Դեմիրճյանը, որը նախ ոգեկոչում է հիշատակը Ապրիլյան մեր նահատակների և ապա հանգամանորեն կանգ առնում Մեծ հաղթանակի 30-ամյակի (1945—1975) առիթով Հայրենական պատերազմում զոհվածների սխրագործության վրա, շեշտում, որ մեր հանրապետությունը կանգնել է այս օրերին խոստումնալից կյանքի ու աշխարհաշեն կառուցումների հետագա նոր ապրիլների առաջ, ժողովրդական տնտեսության բոլոր բնագավառներում, և որ հայ ժողովուրդն այսօր, ավելի քան երբեք, լավատես ու վճռական, իր լուսավոր հալացքն ուղղել է պայծառ գալիքին, սովետական ժողովուրդների եղբայրական ընտանիքում:

Արդարև, կանցնեն տարիներ, կգան վարդաբույր նոր ու խոստումնալից ապրիլներ, որոնք հազար բերք ու բարիքով կլեցնեն մեր հայրենի ամբարներն ու մեր սրտերը և կամրապնդեն մեր հայրենիքի հզորությունն ու անվտանգությունը և կբարձրացնեն նաև նրա միջազգային հեղինակությունն ու դիրքը:

Այսօր, ապրիլի 24-ին, Երևան...

Ժամը 19-ն է...

Ողջ հանրապետությունում հայտարարվել է **Լոռույան րոպե**: Կանգ է առել ամեն շարժում և կյանք...

Հայրենաբնակ բովանդակ հայությունը

«Եվ ո՛րք մի երկիր,

ժողովուրդ մի ողջ սրտով վշտառու»

մեկ րոպե հպարտ լույթամբ, երախտապարտ հիշողության լույսով, մեր սիրո, մեր վշտի լույսով հարգում է 1915 թվականի Ապրիլյան եղեռնի զոհ դարձած շուրջ երկու միլիոն իր նահատակների հիշատակը...

«Երանի՜ մեռելոցն, որք ի Տէր Անջեցին, զի գործք իրեանց չոգան զկնի իրեանց»:

Փա՛ռք և հարգա՛նք, քե՛զ, երեկ նահատակված ու այսօ՛ր հրաշափառապետ հարություն առած հա՛յ ժողովուրդ, Հայո՛ց աշխարհ:

Ա.ՐԹՈՒՆ ՀԱՏԻՏՅԱՆ

